ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 4

2018թ մայիսի 16-ին տեղի ունեցավ ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցի 9-րդ «Ա» դասարանի ծնողական ժողովը: Ժողովին ներկա էին բոլոր ծնողները, դասղեկ Լ. Ազարյանը, տնօրեն Ն. Բաբայանը, տնօրենի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ Զոյա Գևորգյանը և սովորողների հետ դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչ Անժելա Գինոսյանը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցում 2018-2019 ուստարվա գիտելիքների ստուգման, ավարտական և պետական ավարտական քննությունների կազմակերպման և անցկացման ժամանակացույցին և աշխատակարգին, սովորողների փոխադրման, ավարտման , ուստարվա ընթացքում բացակայած սովորողների փոխադրման կարգին ծանոթանալու հարցը:
2. Ընթացիկ հարցեր (բացակայություններ, հերթապահություն, վարք և այլն):

1. Լսեցին. -ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցում 2018-2019 ուստարվա գիտելիքների ստուգման, ավարտական և պետական ավարտական քննությունների կազմակերպման և անցկացման ժամանակացույցին և աշխատակարգին, սովորողների փոխադրման, ավարտման , ուստարվա ընթացքում բացակայած սովորողների փոխադրման կարգին ծանոթանալու հարցը:

Տնօրեն Ն. Բաբայանը խոսեց տարեվերջյան անելիքների և դրանց կարևորության մասին՝ որպես տարվա ընթացքում կատարած աշխատանքները պատասխանատվորեն հանրագումարի բերելու անհրաժեշտության:

Նա ներկայացրեց ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցում 2018-2019 ուստարվա գիտելիքների ստուգման, ավարտական և պետական ավարտական քննությունների կազմակերպման և անցկացման աշխատակարգը և ժամանակացույցը, սովորողների փոխադրման և ավարտման, ուստարվա ընթացքում բացակայած սովորողների փոխադրման կարգը: Տնօրենը հորդորեց լինել ուշադիր, գրանցել քննությունների և գիտելիքների ստուգման օրեր: Նա նշեց, որ այս տարի առաջին անգամ «Հայոց լեզու» առարկայի քննությունը լինելու է միասնական կենտրոնացված, դրա համար կարևոր է լինել հետևողական աշակերտների ներկայությունը

քննություններին և քննություններին պատրաստվելու համար կազմակերպվող կոնսուլտացիաներին ապահովելու համար:

Իր խոսքում 9-րդ դասարանի դասղեկ Լուսինե Ազարյանը ևս կարևորեց ծնողների հետևողական աշխատանքի կարևորությունը՝ քննություններին բարեխղճորեն պատրաստվելու և լավ հանձնելու հարցում:

Մենք անում ենք ամեն ինչ, կոնսուլտացիաներ կազմակերպում ենք ամեն օր, պատրաստակամ ենք ցանկացած աշակերտի հետ կատարելու ամենօրյա անհատական աշխատանք, միայն թե նրանք կարողանան ի ցույց դնել տարիների ընթացքում ուսուցչի կատարած բարեխիղճ աշխատանքի արդյունքում ձեռք բերած գիտելիքները:

Որոշեցին.- Ի գիտություն ընդունել գիտելիքների ստուգման, ավարտական և պետական ավարտական քննությունների կազմակերպման ժամանակացույցն ու աշխատակարգը, լինել հետևողական աշակերտների նկատմամբ՝ քննություններին լավ պատրաստվելու և ներկայանալու համար:

2. Լսեցին.- Ընթացիկ հարցեր:

Խոսեցին դասարանի ծնողկոմիտեի նախագահ Մարինա Թարոյանը և դասարանական խորհրդի նախագահ Միլենա Սարգսյանը, կատարվեց մտքերի փոխանակություն, որի ժամանակ աշակերտներն արտահայտեցին իրենց կարծիքները դպրոցում և դպրոցից դուրս անցկացվող բոլոր տեսակի միջոցառումների վերաբերյալ: Միլենան շեշտեց դասարանի այն աշակերտների անունները, ովքեր մասնակցում են տարբեր խմբակների պարապմունքների և ունեն բավականին լուրջ հաջողություններ: Անհարգելի բացակայություններ չեն լինում: Դասղեկը հետևողական է եղել օրագրերի գործածության, հերթապահության, հաճախումների, դասագրքերի և աշխատանքային տետրերի վիճակի ստուգման, համազգեստի, նրա պահպանման, ինչպես նաև դասարանի սանիտարական վիճակի ու գույքի պահպանման հարցում: Եթե եղել են կարգապահական շեղումներ, ապա անմիջապես տեղեկացվել է ծնողներին ամեն ինչի մասին և դասղեկ-ծնող համատեղ ջանքերով փորձել են հարթել ծագած խնդիրները: Դասարանի 6-10 աշակերտ մասնակցել են արտադասարանական և արտադպրոցական տարբեր խմբակների (սպորտային, երաժշտական, գրականության, կերպարվեստի, պարի և այլն) պարապմունքների դպրոցում, կուլտուրայի տանը, երաժշտական դպրոցում, Աբովյանում ու Երևանում,որոնք նպաստում է նրանց գիտելիքների հարստացմանը և կարողությունների ու հմտությունների բացահայտմանը:

Ծնողներին ևս մեկ անգամ հիշեցվեց, որ 9-րդ դասարանը ավարտական ու քննական դասարան է: Լավ արդյունք ապահովելու համար պետք է լրջորեն

նախապատրաստվել: Դրան պետք է օգնեն նաև ծնողներն իրենց ամենօրյա հետևողական աշխատանքով:

Զեկուցողը նշեց նաև ուսման մեջ չառաջադիմող ու հետ մնացող աշակերտների անունները, նրանց վարքի դրսևորման, հերթապահության կատարման, ավագների աշխատանքի արդյունքները, տվեց դասարանի ծնողական և աշակերտական խորհուրդների աշխատանքի համառոտ ամփոփագիրը:

Լսեցին նաև ծնողների ելույթները. Արտյոմ Հակոբյանը խոսեց տղաների կարգապահության ու վարքի մասին և նշեց, որ նրանք վաղվա զինվորներն են ու ծառայելու են հայոց բանակում:
Որքան բարձր լինի նրանց մակարդակը, այնքան հեշտ կլինի ծառայությունը,
իսկ զինվորի առաջին քայլերն արվում ու սկսվում են դպրոցից: Հասմիկ Հակոբյանը հորդորեց բոլոր տղաներին օրինակ ծառայել դասարանի աղջիկների համար իրենց վարքով և առաջադիմությամբ: Մարինա Թարոյանը ու Վերգինե Գալստյանը խորհուրդ տվեցին ուսման մեջ չառաջադիմող աշակերտներին հետևել լավ սովորողներին և հասնել նրանց: Ծնողխորհրդի նախագահ Մարինա Թարոյանը առաջարկեց ուժեղացնել դասարանում կատարվող բոլոր աշխատանքների հսկողությունը ծնողների կողմից և ամեն հարցում հենարան լինել դասղեկին:

Որոշեցին.- Հաճախակի լինել դպրոցում, կատարել դասալսումներ, հետևել և օգնել աշակերտներին ամեն հարցում: Ստուգել երեխայի ամենօրյա դասապատրաստումները (տնային և գործնական աշխատանքների կատարում, օրագրի լրացում և այլն): Քննարկվեցին նաև ընթացիկ հարցեր՝ գիտելիքների զարգացման և այլ խնդիրների լուծման հետ:
Ուժեղացնել դասարանի աշակերտների նկատմամբ հսկողությունը սովորելու հարցում ծնողների կողմից և ամեն գործում օգնել դասղեկին, ավելի հաճախ լինել դպրոցում, կատարել դասալսումներ՝ աշակերտների կարգապահությունը և վարքը բարձր մակարդակի վրա դնելու համարԵլույթ ունեցան նաև աշակերտները և խոսեցին իրենց հուզող հարցերի մասին:

Վերջում ավագը բոլոր աշակերտների անունից խոստացան վերանայել իրենց գնահատականները, լինել կարգապահ և բարձր պահել դասղեկի ու ծնողների պատիվը:

Ծնողական խորհրդի նախագահ՝ ----------- Մ.Թարոյան

Քարտուղար՝ ----------- Լ.Թադևոսյան